

ԱՇՏԱՆԱԿ

Սիմֆերապոլիցի Մեծարգոյ Պ. Աւետիք Սարգսիսկան Խլէպիքեան մեծափափագ տենչանօք անձամբ զիմելով յուխտ եւ յերկրպագութիւն Առաքելական Աթոռոյս սրբոյ Էջմիածնի՝ եւ ի պէտո Մայր Տաճարիս միջակաղիր մի զոյդ արծաթեայ աշտանակ յիշատակեց, որոյ կշիռն է 227 զըմն։

Կգովեմք յիշեալ ջերմեռանդ մերազնէի բարեպաշտութիւնը եւ հրապարակաւ շնորհակալութիւնն կյայտնեմք։

Ա.Ի.Ա.ՉՆՈՐԴՈԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ

ՇՈՒՇԻՈՅ.

Արժ. Արիստակէս Վարդապետ Սեդրակեանց՝ ի տեղի Արժ. Գէորգ Վարդապետի Սուրէնեանց՝ Շուշլոյ վիճակին Առաջնորդական Փոխանորդ կարգեցաւ եւ ամսոյս 24-ին մեկնեցաւ ի սուրբ Էջմիածնէ ի Շուշի երթալոց համար։

Մեծայոյս եմք՝ զի Արժ. Արիստակէս Վարդապետն ի բազմաց հետէ ի Շուշի տիրած երկառակութեանց՝ որք վերջին ամիսներում խիստ վտանգաւոր դրութեան եւ յուզմանց ենթարկուած էր՝ խոհեմութեամբ եւ քաղցրութեամբ կյաջողի առաջքը առնուլ, եւ սէր՝ խաղաղութիւն եւ միութիւն սփռել ժողովրդեան մէջ, միանգամայն դպրոցաց վերայ բարւոք եւ ուշագիր խնամքարով՝ արգիւնաւոր վիճակի վերած ել։

— Հայկական Աղգային դաստիարակութեամբ եւ կենցակօգուտուսմամբք զարգացնելով մերազնեայ երկուց սեռից մանկունքը՝ յորոց կախումն ունի Հայաստանեայց Աղգի եւ Եկեղեցւոյ յարատեւութիւնը եւ պայծառութիւնը։

Նաեւ անշուշտ եմք՝ զի Շուշարնակ մեր սիրելի եղբարք զգուշանալով այլ եւս յուզիչ ընթացքէն եւ կուսակցութենէն՝ միմիայն կմտածեն եւ կթանան յօդուտ եւ ի պէտո Աղգի եւ Եկեղեցւոյ, եւ այսպիսի բարի եռանդեամբ եւ ըդգացմամբ մրցել ընդ միմեանս եւ ոչ երբէք կներեն ինքեանց՝ զի ցնդած անձանց թելադրութեանց խարուելով՝ ընդդէմ միմեանց եւ չարաչար ատելութեամբք զինուին՝ եւ գահավէժ ընթացիւք վտանգաբեր մի ուղղութեան մոլորուին։

Ըստ խոստման մերում ահաւասիկ կհրատարակեմք հանգուցեալ Ստեփան Յօնանեանցի վերայ կարգացուած դամբանականը։

ՊԱՄԲԱՆԱԳԱ

Ի ՎԵՐԱՅ ՀԱՆԳՈՒՅԵԼՈՅՆ Ի ՏԵՐ

ԱՏԵՓԱՆԻ Յ. ՅՈՒՍՈՒԵՍՆՅ.

Ի կերպուի սրբոյ Եկեղեցւոյ հանգչի այսօր եւ եսուն և եօթնամեայ ծաղկեալ հասակումն մի պատուական բարի մարդ՝ զարդարեալ շատ տեսակ կատարելու թեամբ և քրիստոնէալ պատուական քինութեամբ, Հայկայ մի պատուական որդին Աղգութեան մի սիրելի Անդամն և իւր ծերունակարդ՝ Աղգասէր հօրն անդրանիկ ժառանգն՝ Պա-